ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 52 68 44
էլ. փոստ minister@moh.am

______________N ________________

Ձեր N _____________________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
«ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ
ՏՆՕՐԵՆ ՊԱՐՈՆ ԱՐՄԵՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Եղիազարյան

Ձեր՝ 2015 թվականի մարտի 2-ի թիվ 37/37.2/3010-15 գրությամբ ներկայացված «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ կից ներկայացվում է առողջապահության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունը:

Միևնույն ժամանակ, նախագծի վերաբերյալ հայտնում եմ հետևյալ դիտողությունը և առաջարկությունը.

Նախագծի հոդված 8.1.-ի 1-ին մասում անհրաժեշտ է հստակեցնել, թե պետական լիազոր մարմնի որ որոշումներն են ենթակա ծանուցման՝ հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱՐՄԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Կատարող՝ Եվգենիա Մուրադյան
ՀՀ ԱՆ իրավաբանական վարչություն
Հեռ՝ 56-56-81

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 23-ի N 1104-Ն որոշման պահանջներով

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման դեպքում**

«Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ ԱՐՄԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ